ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.01.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/93

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

«Խաչպար» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ս. Բալասանյանի (իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից քաղվածք, գրանցման համար՝ 264.110.05665)

քննելով «Կապանի ԲԿ» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 20.12.2019թ. ներկայացված (20.12.2019թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/93 բողոք), պարզեցի հետևյալը.

1. «Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Խաչպար» ՍՊԸ-ն 20.12.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Կապանի ԲԿ» ՓԲԸ-ն «Բժշկական նշանակության ապրանքների» ձեռքբերման նպատակով հայտարարություն է հրապարակել «ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/5» ծածկագրով գնանշման հարցման մասին, որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 2019 թ. դեկտեմբերի 18-ի թիվ 2 որոշմամբ, որի Հրավերի թվով 7 չափաբաժիններից «Խաչպար» ՍՊԸ-ն բողոքարկում է թիվ 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինները, որոնց համար չափաբաժնի անվանումը սյունակներում նշված է միևնույն՝ դիալիզատոր անվանումը:

Հրավերի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» Հավելված թիվ 1-ի «անվանումը և ապրանքային նշանը» սյունակներում թիվ 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքների համար գրված է միևնույն՝ դիալիզատոր անվանումը, իսկ տեխնիկական-բնութագիրը սյունակներում ներառված պահանջներում այդ 3 ապրանքների համար նշված է միևնույն և միայն մեկ պահանջ՝ «մանրազերծման մեթոդը շոգով» մեթոդի առկայության պահանջը:

Համաձայն Հրավերի՝ գնման առարկաներ են հանդիսանում «Բժշկական նշանակության ապրանքներ»-ը, որոնց թվում են նաև մեր կողմից բողոքարկվող թիվ 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասերով պահանջվող «Դիալիզատոր» անվանում ապրանքները: Այդ ապրանքների արտադրության պրոցեսում եզրափակիչ փուլ է հանդիսանում մանրէազերծումը, որոնք իրականացվում են մի քանի մեթոդներով:

Համաձայն ՀՀ-ի կողմից վավերացրած Միջպետական Ստանդարտ «ГОСТ ISO 8.651-2016»-ի սահմանումների, «Բժշկական նշանակության ապրանքներ»-ի արտադրության եզրափակիչ՝ մանրէազերծման, փուլ է հանդիսանում նաև ռադիացիոն մանրէազերծման մեթոդը:

Պատվիրատուի կողմից Հրավերի թիվ 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասերով նշված են տվյալ ապրանքների մանրէազերծման համար կիրառվող մեթոդներից միայն մեկը՝ «մանրազերծման մեթոդը շոգով», բաց է թողնված ՀՀ-ի կողմից վավերացրած Միջպետական Ստանդարտ «ГОСТ ISO 8.651-2016»-ով սահմանված մանրէազերծման ռադիացիոն մեթոդը, ինչը նշանակում է, որ այդ պահանջը ամբողջական չէ, թերի է, ուստի չի համապատասխանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասով «3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները

հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա», սահմանված պահանջներին և արգելք է հանդիսանում բժշկական նշանակության ապրանքների մանրէազերծումը ռադիացիոն մանրէազերծման մեթոդով իրականացված «Դիալիզատոր» անվանում ապրանքները առաջարկող հնարավոր մասնակիցների՝ այդ թվում նաև «Խաչպար» ՍՊԸ-ի համար՝ իրականացնելու «Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդված պահանջով սահմանված ցանկացած անձի՝ տվյալ դեպքում՝ «Խաչպար» ՍՊԸ-ի, գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը Հրավերի թիվ 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասերով:

«Խաչպար» ՍՊԸ-ն հայտնել է, որ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի թիվ 46-րդ հոդվածի 1-ին մասով և 3-րդ մասի 1-ին կետով, բողոքարկում է Պատվիրատուի՝ «Կապանի ԲԿ» ՓԲԸ-ի ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/5 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 2019թ. դեկտեմբերի 18-ի թիվ 2 որոշմամբ հաստատված՝ «Բժշկական նշանակության ապրանքների» ձեռքբերման նպատակով հայտարարված ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/5 ծածկագրով գնանշման հարցման Հրավերի ընթացակարգը՝ Հրավերի թիվ 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասերով, և դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրում է ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի թիվ 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ընդունելու որոշում, որը կպարտավորեցնի՝ «Կապանի ԲԿ» ՓԲԸ-ի ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/5 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝ ընդունելու որոշում՝ ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/5 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգում փոփոխություն կատարելու համար՝ Հրավերի թիվ 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասերով:

Ընկերությունը վկայակոչել է բողոքի հետևյալ փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝

Պատվիրատուի կողմից Հրավերի թիվ 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագիրը սյունակներում ներառված պահանջներում առկա է միայն «մանրազերծման մեթոդը շոգով» մանրէազերծման մեթոդի պահանջը, բացակայում է այդ

ապրանքների մանրէազերծման համար կիրառվող՝ ռադիացիոն մանրէազերծման մեթոդի մասին գրառումը, այսինքն այդ պահանջը ամբողջական չէ, թերի է, որի պատճառով էլ հակասում է Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջներին և արգելք է հանդիսանում «Խաչպար» ՍՊԸ-ի համար՝ իրականացնելու Օրենքի 7-րդ հոդված պահանջով սահմանված ցանկացած անձի՝ տվյալ դեպքում՝ «Խաչպար» ՍՊԸ-ի, գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը Հրավերի թիվ 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասերով:

Ընկերությունը ի լրումն բողոքի խնդրել է վերափոխել բողոքի պահանջը հետևյալ պահանջով՝ պարտավորեցնել «Կապանի ԲԿ» ՓԲԸ-ի ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/5 ծածկագրով գնահատող հանձանժողովին՝ ընդունելու որոշում՝ ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/5 ծածկագրով ընթացակարգում կատարելու փափոխություն՝ Հրավերի թիվ 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասերով՝ համապատասխանեցնելով Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին և 13-րդ հոդվածի 3-րդ մասերով սահմանված պահանջներին:

«Խաչպար» ՍՊԸ-ի տնօրենը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 27.12.2019թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր մասնակցությունը, ով պնդել է բողոքը:

<u>2. «Կապանի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Կապանի ԲԿ» ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անիձին ուղղված 26.12.2019թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Կապանի ԲԿ» ՓԲԸ-ի հեմոդիալիզի բաժանմունքը գործում է 2007թ.-ից, որտեղ օգտագործվում են Fresenius Medikal care 4008S հեմոդիալիզի 7 սարք: Բաժանմունքում այս պահին բուժում է ստանում 22 հիվանդ:

Այս տարիների ընթացքում բաժանմունքում հիմնականում օգտագործվել են Fresenius ֆիրմայի դիալիզատորներ, արյունատար գծեր, ֆիստուլային ասեղներ, որոնք ձեռք են բերվել գնումների օրենսդրությանը համապատասխան կազմակերպված գնման գործընթացների միջոցով:

2019թ. հոկտեմբեր ամսին առողջապահության նախարարությունը, հաշվի առնելով հեմոդիալիզի գործընթացի կարևորությունը և առկա խնդիրները նախծաձեռնել է հեմոդիալիզի ժամանակ կիրառվող դիալիզատորների և պարագաների տեխնիկական

բնութագրերի մշակման գործընթաց: Բժշկական կազմակերպություններին ուղարկվել են տեխնիկական բնութագրերի նախնական տարբերակներ, քննարկվել են հեմոդիալիզի բաժանմունքի աշխատակազմի կողմից և ներկայացվել է կարծիք, որ նշված տեխնիկական բնութագրերը համապատասխանում են մեր կողմից օգտագործվող դիալիզատորների ր պարագաների տեխնիկական բնութագրերին և այդ բնութագրերով ձեռք բերվող ապրանքները կիրառելի են մեր բաժանմունքում օգտագործվող սարքերի համար:

Սույն թվականի հոկտեմբերի 22-ին առողջապահության նախարարությունը ՆԱ.Ա/063/17366-19 գրությամբ ներկայացրել է դիալիզի պարագաների ունիվերսալ տեխնիկական բնութագրերը:

«Կապանի ԲԿ» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպված ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/5 ծածկագրով մրցույթը կազմակերպելիս կիրառվել են առողջապահության նախարարության մասնագետների կողմից մշակված ունիվերսալ տեխնիկական բնութագրերը, որոնք համապատասխանում են կազմակերպության կարիքներին:

Կազմակերպության կարիքներից ելնելով մատակարարման ենթակա ապրանքի տեխնիկական բնութագրեր սահմանելը, դա պատվիրատուի օրենքով ամրագրված իրավունքն է: Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն:

Ամփոփելով վերոգրյալը, Պատվիրատուն հայտնել է, որ կարևորելով հիվանդների առողջությունը և Պատվիրատուի կողմից մատուցվող ծառայությունների որակը, գտնում է, որ գնման առարկաների տեխնիկական բնութագրերը ներկայացված են ելնելով Պատվիրատուի կարիքներից և պահպանված է օրենքի պահանջները:

«Կապանի ԲԿ» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 27.12.2019թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2019/93 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2019/93 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Կապանի ԲԿ» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգի 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով նախատեսվել են հետևյալ տեխնիկական բնութագրերը.

4	Դիալիզատոր	Գերզտման գործակիցը մինչև 24 մլ/ժամ մմ Hg, թաղանթի նյութը՝ սինթետիկ, արդյունավետ մակերեսը 1,4±0.1 մ2, թաղանթի հաստությունը 30-40 մկմ, ներքին տրամաչափը մինչև 200 մկմ, լցման ծավալը մինչև 100մլ, ***մանրէազերծման մեթոդը շոգով***: Գործող Fresenius Medikal Care 4008S սարքին համապատասխան: ISO և CE սերտիֆիկատների առկայությունը պարտադիր է:
5	Դիալիզատոր	Գերզտման գործակիցը մինչև 24 մլ/ժամ մմ Hg, թաղանթի նյութը՝ սինթետիկ, արդյունավետ մակերեսը 1,6±0.1 մ2, թաղանթի հաստությունը 30-40 մկմ, ներքին տրամաչափը մինչև 200 մկմ, լցման ծավալը մինչև 100մլ, ***մանրէազերծման մեթոդը շոգով***: Գործող Fresenius Medikal Care 4008S սարքին համապատասխան: ISO և CE սերտիֆիկատների առկայությունը պարտադիր է:
6	Դիալիզատոր	Գերզտման գործակիցը մինչև 24 մլ/ժամ մմ Hg, թաղանթի նյութը՝ սինթետիկ, արդյունավետ մակերեսը 1,8±0.1 մ2, թաղանթի հաստությունը 30-40 մկմ, ներքին տրամաչափը մինչև 200 մկմ, լցման ծավալը մինչև 120մլ, ***մանրէազերծման մեթոդը շոգով***: Գործող Fresenius Medikal Care 4008S սարքին համապատասխան: ISO և CE սերտիֆիկատների առկայությունը պարտադիր է:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 20.12.2019թ. ներկայացված բողոքը, «ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/5» ծածկագրով ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը, գտնում եմ, որ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: <u>Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:</u>

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պայմաններով գնում կատարելու դեպքերի:

Այսպիսով՝ «Կապանի ԲԿ» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական սարքավորումների և գործիքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով նախատեսվել են հետևյալ տեխնիկական բնութագրերը.

4	Դիալիզատոր	Գերզտման գործակիցը մինչև 24 մլ/ժամ մմ Hg, թաղանթի նյութը՝ սինթետիկ, արդյունավետ մակերեսը 1,4±0.1 մ2, թաղանթի հաստությունը 30-40 մկմ, ներքին տրամաչափը մինչև 200 մկմ, լցման ծավալը մինչև 100մլ, մանրէազերծման մեթոդը շոգով: Գործող Fresenius Medikal Care 4008S սարքին համապատասխան: ISO և CE սերտիֆիկատների առկայությունը պարտադիր է:
5	Դիալիզատոր	Գերզտման գործակիցը մինչև 24 մլ/ժամ մմ Hg, թաղանթի նյութը՝ սինթետիկ, արդյունավետ մակերեսը 1,6±0.1 մ2, թաղանթի հաստությունը 30-40 մկմ, ներքին տրամաչափը մինչև 200 մկմ, լցման ծավալը մինչև 100մլ, մանրէազերծման մեթոդը շոգով: Գործող Fresenius Medikal Care 4008S սարքին համապատասխան: ISO և CE սերտիֆիկատների առկայությունը պարտադիր է:
6	Դիալիզատոր	Գերզտման գործակիցը մինչև 24 մլ/ժամ մմ Hg, թաղանթի նյութը՝ սինթետիկ, արդյունավետ մակերեսը 1,8±0.1 մ2, թաղանթի հաստությունը 30-40 մկմ, ներքին տրամաչափը մինչև 200 մկմ, լցման ծավալը մինչև 120մլ, մանրէազերծման մեթոդը շոգով : Գործող Fresenius Medikal Care 4008S սարքին համապատասխան: ISO և CE սերտիֆիկատների առկայությունը պարտադիր է:

Այսպիսով՝ ուսումնասիրելով «ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/5» ծածկագրով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիրը 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով, գտնում եմ, որ դրանք համապատասխանում են գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին հետևյալ հիմնավորմամբ.

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Վերոհիշյալ նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ տեխնիկական բնութագիրը պետք է լինի հնարավորինս հստակ՝ ներառելով գնման առարկայի բոլոր հատկանիշները և միակ պայմանն այն է, որ տեխնիկական բնութագիրը չպետք է պահանջ կամ հղում պարունակի որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց, իսկ հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Դրա հետ մեկտեղ գնումների և գնումների գործընթացի իրականացման կարևորագույն սկզբունքներից է հանդիսանում գնման արդյունավետ և օգտավետ իրականացումը, հետևաբար պատվիրատուի կողմից իրականացվող գնումը պետք է լիարժեք համապատասխանի վերջինիս գնման պահանջին և ապահովվի պատվիրատուի

այն կարիքի բավարարումը, որի նպատակով կազմակերպվել է նշված գնումը և միևնույն ժամանակ չհակասի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ և 13-րդ հոդվածների պահանջներին:

Ուսումնասիրելով Ընթացակարգի տեխնիկական բնութագիրը՝ գտնում եմ, որ այն կազմված է գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխան և չի հակասում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով սահմանված՝ տեխնիկական բնութագրի կազմմանը ներկայացվող պահանջներին:

Մասնավորապես՝ հրավերի 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժիններով սահմանվել են մանրազերծման մեթոդը շոգով պահանջը, որը խտրական չէ և հղում չի կատարում որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, ուստի նման պայմաններում չի խախտվում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 13-րդ հոդվածի 5-րդ մասերով սահմանված պահանջները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Խաչպար» ՍՊԸ-ի բողոքն հիմնավոր չէ և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 20.12.2019թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**